Ցետամոլ **100**մգ/մլ

Բաղադրությունը՝ Ակտիվ բաղադրատարր՝ պարացետամոլ 100մգ/մլ
Օժանդակ նյութեր՝ պրոպիլեն գլիկոլ, սախարին նատրիում, կիտրոնաթթու, մեթիլպարաբեն, պրոպիլպարաբեն, բալի համահաղորդիչ, պանսո: Չի պարունակում էթիլ սպիրտ:

Դեղածևը՝ ներքին ընդունման մանկական կաթիլներ, բալի համով:

Դեղաբանական խումբը՝ ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր:
Ֆարմակոդինամիկա
Պարացետամոլը կլինիկորեն ապացուցված ցավազերծիչ և ջերմամարիչ է: Պարացետամոլի ցավազրկող ազդեցությունը պայմանավորված է ցավի շեմքի բարձրացմամբ, իսկ ջերմիջեցնողը՝ ենթատեսաթմբի ջերմակարգավորող կենտրոնի վրա ազդեցությամբ: Պարացետամոլն իր ցավազերծող և ջերմիջեցնող ազդեցությամբ հավասարազոր է ասպիրինին, սակայն ավելի փիչ հավանականությամբ է առաջացնում
կողմնակի ազդեցություններ, որոնք հատուկ են ասպիրինին եւ ասպիրին-պարունակող դեղերին: Չի գրգռում ստամոքսաղիքային համակարգը և չի ազդում ջրաաղային փոխանակության վրա, քանի որ չի ազդում պրոստոգլանդինների սինթեզի վրա պերիֆերիկ հյուսվածքներում:
Ֆարմակոկինետիկա
Պարացետամոլն արագ է ներծծվում ստամոքսաղիքային համակարգից: Արյան մեջ առավելագույն խտությունն ապահովվում է ներքին ընդունումից մոտավորապես 10-60 րոպե անց: Պարացետամոլը տեղաբաշխվում է օրգանիզմի շատ հյուսվածքներում: Բուժական դեղաչափի դեպքում պլազմայի սպիտակուցների հետ կապվում է աննշան քանակով, որն ավելանում է դեղի բարձր խտության պայմաններում: Կիսադուրսբերման փուլը տատանվում է 1-ից մինչև 3 ժամ: Նյութափոխանակվում է առավելապես լյարդում և արտազատվում մեզով՝ լծորդիչների (գլյուկուրոնիդներ և սուլֆատներ) ձևով: 5%-ից պակաս արտազատվում է անփոփոխ ձևով:

Կիրառման ցուցումներ
-որպես ջերմիջեցնող միջոց՝ սուր ռեսպիրատոր հիվանդությունների, գրիպի, մանկական վարակների և այլ բորբոքային հիվանդությունների ժամանակ, որոնք ուղեկցվում են ջերմության բարձրացումով, հետպատվաստումային շրջանում,
-որպես ցավազրկող՝ թույլ եւ չափավոր ցավերի ժամանակ (գլխացավ, ատամնացավ, մկանացավ, հյարդացավ, տրավմատիկ ցավերի ժամանակ)

Կիրառման ձեւ և դեղաչափումը
Ցետամոլի կաթիլների դեղաչափումը կախված է երեխայի տարիքից և մարմնի քաշից: Ցետամոլի կաթիլների միանվագ դեղաչափը կազմում է 10-15մգ/կգ քաշին, օրական առավելագույնը՝ 60մգ/կգ քաշին: Դեղաչափը կարող է կրկնվել յուրաքանչյուր 4 ժամը մեկ, բայց չպետք է գերազանցի օրական 5 անգամը:
Դեղաչափը որոշվում է հետևյալ վերահաշվարկով՝ 1կգ քաշին տրվում է 2 կաթիլ Ցետամոլ:
10մգ = 2 կաթիլ
1կգ = 2 կաթիլ

Տարիք	Երեխայի քաշը կգ	Միանվագ դեղաչափ
1-3 տարեկան	Բժշկի ցուցումով	
3-5 տարեկան	6-8 կգ	12-16 կաթիլ
5 ամսեկանից 1 տարեկան	8-10 կգ	16-20 կաթիլ
1-2 տարեկան	10-12 կգ	20 - 24 կաթիլ
2-3 տարեկան	12-16 կգ	24 - 32 կաթիլ

4-5 տարեկան	16-21 կգ	32 – 42 կաթիլ

Եթե երեխայի քաշը էապես տարբերվում է նշվածից, ապա այն պետք է համապատասխանաբար ճշտվի:
Ցետամոլ կաթիլները կարող են տրվել ինքնուրույն կամ մանկական կերի, մրգային հյութի կամ ջրի հետ խառնված:
Որպես ջերմամարիչ չկիրառել 3 օրից ավել:
Որպես ցավազերծիչ չկիրառել 5 օրից ավել

Հակացուցումներ

-գերզգայնություն պարացետամոլի եւ/կամ այլ բաղադրամասերի նկատմամբ

-երիկամների եւ լյարդի ֆունկցիայի անբավարարություն

-լյարդի, երիկամների ֆունկցիայի ծանր խանգարումներ

Նախազգուշացումներ

Չկիրառել պարացետամոլ պարունակող այլ դեղերի հետ զուգահեռ:
Վաղաժամ ծնված և մինչեւ 3 ամսական երեխաների համար օգտագործելուց առաջ խորհրդակցել բժշկի հետ:
Պատահական գերդեղաչափման դեպքում անմիջապես դիմեք բժշկի:
Հարկավոր է զգուշությամբ կիրառել ծանր երիկամային կամ լյարդային անբավարարությամբ տառապող հիվանդների մոտ, գլյուկոզ-6-ֆոսֆատդեհիդրոգենազա ֆերմենտի ժառանգական բացակայության դեպքում, արյան ծանր հիվանդությունների ժամանակ (ծանր անեմիա, լեյկոպենիա, թրոմբոցիտոպենիա);
Այս դեղը պարունակում է մեթիլ և պրոպիլ պարաբեններ, որոնք կարող են առաջացնել ալերգիկ ռեակցիաներ, հնարավոր է հետածգված:
Այս դեղը պարունակում է պանսո (E124), որը կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիաներ:
Չգերազանցել նշված դեղաչափը:
Կողմնակի երևույթներ

Բուժական դեղաչափերի դեպքում կողմնակի ազդեցությունները հազվադեպ են և քիչ արտահայտված: Երբեմն արտահայտվում են սրտխառնոցի, փսխման, ստամոքսի ցավի, արյունային ռեակցիաների (թրոմբոցիտոպենիա, նեյտրոպենիա, լեյկոպենիա, ագրանուլոցիտոզ) տեսքով: Երբեմն տեղ են գտնում մաշկի կարմրությունը, եղնջացանն ու գերզգայնության այլ ռեակցիաներ:

Պիտանիության ժամկետը

2 տարի:

Պահման պայմանները

Պահպանել լավ փակված տարայում, մինչև 25˚C ջերմաստիճան:

Պահել երեխաներից հեռու վայրում:

Թողարկման ձևը

30մլ պլաստիկե շշիկ կաթոցիկով:

Բաց թողման կարգը

Առանց դեղատոմսի: